

Անուշ Ռ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԹՈՒՐԻՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին*

Մուտք

Անժխտելի է այն փաստը, որ Հայոց ցեղասպանությունը և դրա հետևանքները արմատական ազդեցություն են թողել հայ և թուրք ժողովուրդների հետագա ճակատագրերի վրա՝ մեծապես պայմանավորելով երկու հասարակությունների ձևավորման գործընթացը:

Թուրքիայի դիրքորոշումը այս խնդրի հանդեպ բնորոշվում է որպես **ժխտողականություն**, իսկ ամերիկացի ցեղասպանագետ Հենրի Հուֆթենբախի բնութագրմամբ՝ **ինստիտուցիոնալիզացված ժխտողականություն**¹:

Իսկ ինչպիսի՞ն է թուրք հասարակության վերաբերմունքը այդ պետական քաղաքականությանը, ինչպիսի՞ն միտումներ են արձանագրված անցյալում և այսօր՝ ցեղասպանության ճանաչման առումով:

Փորձենք դիտարկել այս խնդիրներն այնպես, ինչպես տեսնում ենք դրանք Թուրքիայում հետազոտություններ կատարած հայ թուրքագետի աչքերով:

1. Հարցի պատմությունն ու ներկա վիճակը

Ցեղասպանությանը հետևած շուրջ 90-ամյա ժամանակահատվածը մասնագետները բնորոշում են որպես «լռության», «մոռացության» տարիներ: Այդ «մոռացության» պատճառներին թերևս առավել մանրամասնորեն անդրադարձել է Թ. Աքչամը իր «Հայերի ցեղասպանությունը և թուրքերի լռությունը» աշխատության մեջ: «Լռության» հիմնական պատճառը Թ. Աքչամը տեսնում է թուրք ազգային ինքնության կայացման առանձնահատկություններում: «Աթաթուրքի զավակներ» կոչված սերնդի պատկերացումներում «թուրք ազգային պետությունը կառուցվել է զրոյից ի հեճուկս իմպերիալիստական ուժերի», որովհետև թուրքական պաշտոնական պատմագիտության մեկնաբանմամբ՝ «հանրապետությունը այն է, ինչ թուրքերը «եղունգներով են պոկել» Թուրքիան կործանել ցանկացողների ձեռքից»²: Թուրքական պատմագրության քեմալական հայեցակարգը հնարավորություն էր տալիս թուրք հասարակությանը միացնել մոռացության մեխանիզմները,

* Հոդվածն ընդունվել է տպագրության 5.05.2012:

1 Ժխտողականություն, որին ակտիվորեն մասնակցում են պետական կառույցներն ու ինստիտուտները: Տե՛ս **Henry R. Huttenbach**, *The Psychology of Genocide Denial: a Comparison of Four Case Studies*, in “*Problems of Genocide*”, Zoryan Institute of Canada, Toronto, 1997, pp. 166-168.

2 **Taner Akcam**, *The Genocide of the Armenians and the Silence of the Turks*, p. 54, Akcam book pages, pdf.

Գ (Ժ) քաղտ, քիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

վեմ համահայկական հանդես

արգելք դնել «ծանր» հիշողությունների դեմ՝ կապված Առաջին աշխարհամարտում կրած պարտության, կայսրության փլուզման և Հայոց ցեղասպանության հետ: «Շատ հարմար է զգալ, որ դու «նոր մարդ ես», դու չես ուզում, որ քեզ հիշեցնեն անցյալի մասին, որ քո ազգակիցներից շատերը մարդասպան և կողոպտիչ են եղել, դու վախենում ես, որ ցավալի թեմաներին անդրադառնալը կարող է հոգս ցնդեցնել ինքդ քո հանդեպ տածած հպարտությունը»³, – այսպես են նկարագրում հանրային այդ հոգեվիճակը շատ հետազոտողներ:

Հեռևաբար՝ մենք կարող ենք արձանագրել, որ թուրք հասարակությունը «ընտրում է մոռացությունը» կամ «ցանկանում է մոռանալ»:

Բերենք մեկ օրինակ. գինադադարի կամ երկիշխանության շրջանում՝ 1919-1922 թթ., թուրքական թերթերում (դրանք շուրջ 20-ն էին՝ «Ալեմդար», «Մեմլեքեթ» և այլն) ակտիվորեն քննարկվում էին հայերի տեղահանության, սպանությունների, գույքի հափշտակման հետ կապված խնդիրները⁴:

Քեմալականների հաղթանակը վերջ դրեց քննարկումներին, այլախոհ լրագրողները, ինչպես օրինակ՝ Ալի Քեմալը, Լինչի դատաստանին արժանացան և հայտարարվեցին «ազգի դավաճան», կամ «Ալեմդարի» խմբագիր Բեֆի Ջևադ Ուլունայի պես վտարվեցին երկրից⁵: Ժամանակի մամուլից պարզ է դառնում, որ այլախոհությունը չէր հանդուրժվում, ուստի հասարակական քննարկումները բերեցին ո՛չ թե գործած մեղքի գիտակցման և ինքնաքննադատության, այլ այն գերակշռող կարծիքին, որ Առաջին աշխարհամարտում կրած պարտությունը կրկին հզոր կայսրություն դառնալու «կորցրած շանս» էր, և որ «թուրքերը ոչ թե «պարտվեցին», այլ իրենց «դավաճանեցին»:

Այսպիսով, «դավաճանության», «թուրքերի դեմ դավադրության» և «ներքին թշնամիների» մասին տեսակետները արմատավորվում էին թուրք հանրային կարծիքի մեջ և ակտիվորեն խթանվում պաշտոնական քարոզչության միջոցով:

Ընչու է, որ Թուրքիայում պետությունը որոշիչ և վերահսկող դերակատարում է ունեցել և շարունակում է ունենալ կողեկտիվ հիշողության ձևավորման վրա (այն, ինչ Ջեյմս Վերչը անվանել է «textually mediated memory»)⁶, քանզի գլխավորապես միակողմանի և ընտրովի են ներկայացվում այն աղբյուրները, որոնցով ծանոթանում են անցյալին, և իհարկե՝ դրանք միայն այն աղբյուրներն են, որոնք արդարացնում են պետության դիրքորոշումը:

«Մասնավոր», այլընտրանքային աղբյուրները մատչելի չեն եղել: Սակայն ճիշտ է նաև այն, որ թուրք հասարակության կողմից պատմության իմացությունը կախված է եղել ոչ միայն պետականամետ պատմաբանների մատուցածից, այլ նաև նրանից, թե ինչ են իրենք վերապրել, ինչ է փոխանցվել նրանց ընտանեկան հուշերի միջոցով: Չուգահեռ անցկացնելով Խորհրդային Միության պես տոտալիտար երկրի հետ, որտեղ «այլընտրանքային» հիշողություններն ու պատմություններն իրենց արտահայտությունը գտնում էին, օրինակ՝ գրականության մեջ, կարե-

3 St u Belinda Cooper, Denying Genocide: Law, Identity and Historical Memory in the Face of Mass Atrocity Conference, in “The Program in Holocaust and Human Rights Studies and the World Policy Institute Conference”, Benjamin N. Cardozo School of Law, www.cojcr.org, pdf; Sabrina Tavernise and Sebnem Arsu, “Inside the Turkish Psyche: Traumatic Issues Trouble a Nation’s Sense of its Identity”, *NY Times*, October 12, 2007, www.nytimes.com

4 Յենց այդ տարիներին լույս տեսավ Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասնմեկի» գիրքը՝ նվիրված հայ ստավորականների ձերբակալությանն ու աքսորին: 2009 թ. այդ գիրքը հրատարակվեց թուրքերեն: St u Teodik, 11 Nisan Anıtı, İstanbul, 2009.

5 St u Ayşe Hür, Boris Johnson ve büyük dedesi “resmi hain” Ali Kemal, “*Agos*”, 9 Mayıs, 2008: St u Gazi Ustunel, «Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.)», «Մերձավոր Արևելք», 33 ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2006, էջ 34-41:

6 James V. Wertsch, *Voices of Collective Remembering*, Cambridge, UK: Cambridge University Press, 2002, p. 5.

լի էր ակնկալել, որ Թուրքիայի ավտորիտար շրջանի գրականության մեջ նույնպես աղերսներ կլինեն՝ կապված ցեղասպանության կամ հայերի ճակատագրի հետ: Սակայն Առաջին հանրապետության շրջանի գրականության մեջ, բացառությամբ Յաշար Քեմալի և Նազըմ Հիքմեթի, չկա և որևէ հիշատակում հայերի կամ նրանց հանդեպ կատարված ոճրագործության մասին⁷:

Առաջին հանրապետության հանրային դիսկուրսում ոչ միայն Հայոց ցեղասպանության թեման չկա, այլ նաև Թուրքիայի քաղաքացի և ազգային փոքրամասնություն հանդիսացող հայերի խնդիրներն են բացակայում:

Ընդ որում, նշենք, որ օրենքով արգելված էր, օրինակ՝ խոսել դասակարգային պայքարի, քրդական ինքնության մասին, պատժելի էր իսլամի քարոզությունը, մինչդեռ Հայոց ցեղասպանության «տարուն» ինքնըստինքյան ենթադրվող «տարբու» էր: Ուստի, եթե խոսում ենք հասարակության «անտարբերության», «չիմացության» կամ «լռության» մասին, ապա կարող ենք արձանագրել, որ **Հայկական հարցում առկա էր պետություն – հասարակություն համաձայնությունը**:

Մինչև 1960-ականների կեսը, այսինքն՝ Ցեղասպանության 50-ամյակը, որը թե՛ Սփյուռքում, թե՛ Խոհրդային Հայաստանում նշանավորվեց ցույցերով, Հայոց պահանջատիրության բարձրաձայնումով, թուրքական պետության ժխտողականության սլաքը ուղղված էր առավելապես դեպի արտաքին աշխարհ⁸:

1970-1980-ական թթ. Սփյուռքի հայության զինյալ պայքարի արդյունքում խաթարվում է Հայկական հարցի հետ կապված լռության մթնոլորտը: Թուրքական պետությունը ստիպված էր բացատրություններ տալ իր հասարակությանը ողբերգական գործողությունների շարժառիթների մասին: 1987-ին Եվրախոհրդարանը ընդունում է հատուկ բանաձև, որով և՛ դատապարտվում է Հայոց ցեղասպանությունը, և՛ հիշեցվում է Թուրքիայի պարտավորությունների մասին՝ ազգային փոքրամասնությունների և նրանց մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ⁹: Հիշատակման է արժանի, որ հենց այդ տարիներին է լույս տեսնում «Դեպի 2000 թվականը» ամսագրի հատուկ թողարկումը, որտեղ «Մեր հայերը» («Bizim Ermeniler») վերտառությամբ հատուկ անդրադարձ կա հայերի՝ Օսմանյան պետությանը և մշակույթին բերած նպաստի մասին¹⁰: Միևնույն ժամանակ, փորձում են թուրք հանրային կարծիքը ձևավորել «մեր լավ հայերը» և «ագրեսիվ, չարամիտ, դավադրություններ հյուսող, թուրքերին ատող Հայկական Սփյուռք» պարզունակ հակաթեզի շուրջ:

Հարկ է նշել նաև, որ 1980-ական թվականներին սկիզբ դրվեց Հայոց ցեղաս-

7 Թուրք հետազոտող Օմեր Թյուրքեշի կարծիքով՝ հանրապետական շրջանում լույս են տեսել 5000-ից ավելի վեպեր, վիպակներ: Դրանցում ընդամենը մի քանիսում անդրադարձ կա հայերին, սակայն պաշտոնական թեզի լույսի ներքո: Այլակարծիք մի քանի գրողի անուն է հիշատակվում՝ Քեմալ Թահիր, Յաշար Քեմալ, Դողան Աբանը, Աշենուր Յազըք, Ըրֆան Փահալը, Քեմալ Յալչըն: Տե՛ս <http://www.pandora.com.tr/turkce/elestiri.asp?yid=251>: Իսկ պոլսահայ գրականության երկչոտ փորձերից կարելի է հիշատակել Ջարեհ Խրախունու «Պատմություն» բանաստեղծությունը, որտեղ սինվոլիկ կերպով արծարծվում է հայերի ճակատագիրը. («Նրանց տոհմը գայլն է, մերը՝ խոյը, գառը, ահա խնդիրը, մնացյալը՝ պատմություն է»): Տե՛ս **Roubina Peromian**, And Those Who Continued Living in Turkey after 1915, Yerevan, «Gasprint» Publishing House, 2008, pp. 8-9.

8 Օրինակ՝ 1930-ականներին Թուրքիան դիվանագիտական ճնշում էր գործադրում ԱՄՆ-ի վրա՝ ֆ. Վերֆելի վեպի սյուժեով «Մուսա լեռան քառասուն օրը» ֆիլմի նկարահանումը կանխելու նպատակով: Տե՛ս **Edward Minasian**, Musa Dag: The Film That Was Denied, in “Journal of Armenian Studies”, #11:2 (Fall/Winter 1985-86), pp. 63-73.

9 Տե՛ս Text of the European Parliament’s Resolution, 18 June, 1987, in “The Armenian Question Today”, Glendale, California, 1988.

10 Տե՛ս “2000: ikibin’e dogru”, 12-18 Nisan 1987. Դա կապված էր նաև Թուրքիայի ԵՄ անդամակցելու սկզբնական ջանքերի հետ:

պանության միջազգային ճանաչման գործընթացին: Եվ տասնամյակների լուրջ-լուրհից հետո թուրք հասարակությանը հրամցված, «դիվանագված» Սփյուռքի մասին պատկերացումը գերիշխող է այդ տարիների հանրային քննարկումներում: Պարզ է, որ նման մթնոլորտում չափազանց ծանր կացության մեջ էր հայտնվել նաև Ստամբուլի հայությունը:

1990-ական թթ. հիրավի կարելի է անվանել այն շրջանը, երբ «լուրջան պատր» զգալի ճեղքեր է տալիս: Դրան նպաստում են թե՛ գլոբալ զարգացումները՝ «սառը պատերազմի» ավարտը, ԽՍՀՄ-ի փլուզումը, Հայաստանի անկախացումը՝ հայոց պետականության վերականգնումը, հետևաբար և Հայկական հարցը պետականորեն արծարծելու հնարավորությունը, թե՛ Թուրքիայի ձգտումը՝ ԵՄ ինտեգրվելու ուղղությամբ, թե՛ Թուրքիայի ներքաղաքական զարգացումները՝ քրդական հարց, իսլամականության ակտիվացում, թուրք ինքնության շուրջ քննարկումներ և այլն:

Այս համատեքստում կարևոր նշանակություն են ձեռք բերում 1992 թ. Թ. Աբչամի գրքի թուրքերենով հրատարակումը¹¹ և «Ակոս» թերթի հիմնադրումը 1996 թվականին, որը հայերին հուզող խնդիրները քննարկելու եզակի հրապարակ է դառնում՝ Թուրքիայի ընդհանուր ժողովրդավարացման շրջանակներում:

1998-ից սկսած, երբ առաջին անգամ տեղի ունեցավ սփյուռքահայ և թուրք գիտնականների քննարկումը՝ «Հայերը Օսմանյան կայսրության վերջին տարիներին»: Նման բանավեճերը թուրքական գիտական շրջանակներում դարձան պարբերական: 2005 թ. Ստամբուլի «Բիլգի» («Bilgi») համալսարանում կազմակերպվեց Եղեռնի թեմայով գիտաժողով, 2010 թ. Անկարայում՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանը և փոխհատուցման խնդիրներին մվիրված գիտաժողով: Հայկական թեման զգալի տեղ գրավեց նաև թուրքական մամուլում¹²:

2000-ից սկսած կարող ենք խոսել հայկական «տաբու»-ի նահանջի և «լուրջան պատի» ճեղքման մասին: Կարևոր է ընդգծել, որ Հայկական հարցի հանրային քննարկումները դեպի ժողովրդավարացում և քաղաքացիական հասարակության կառուցում տանող համաթուրքական քննարկումների մաս են կազմում: Այդպիսիք են քրդական հարցը, բանակ-հասարակություն դիմակայությունը, ազգային փոքրամասնությունների իրավունքները, քեմալականություն (աշխարհիկություն)- իսլամականություն հակաթեզը և այլն:

Հայկական թեման զգալի տեղ է գրավում արդի թուրք գրականության և հրապարակախոսության մեջ, մասնավորապես կարելի է հիշատակել մի շարք անուններ՝ Էլիֆ Շաֆաք, Օրհան Փամուկ, Քեմալ Յալչըն, Ֆեթիյե Չեթին և այլք: Ընդ որում Օրհան Փամուքը բացահայտ մեղադրանք է նետում պետությանը. «Թուրք ժողովրդից պետության թաքցրած ամենամեծ գաղտնիքը Հայոց ցեղասպանությունն է»¹³: Ցեղասպանության խնդրին առնչվող բազմաթիվ գրքեր է հրատարակել թուրք հայտնի իրավապաշտպան և գրահրատարակիչ Ռագըփ Չարաբոլուն:

Թուրքիայում ձևավորվող քաղաքացիական հասարակությունը հարցադրումներ է բարձրացնում, որոնք լուրջ մարտահրավերներ են պետությանը: Ինչպես նշում է թուրք հետազոտող Լեյլա Նեյզին, «ազգ-պետություն» փոխհարաբերություններն այսօր հետագա ժողովրդավարացման ուղղությամբ համարձակ քայլեր են պահանջում, ներառյալ ոչ վաղ անցյալի պատմության վերագնահատումը

11 Տե՛ս **Taner Akçam**, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, İstanbul, “İletişim Yayıncılık”, 1992.

12 Տե՛ս “In Turkey People are Rebelling Against Armenia Genocide Denial” by Times.am, 1 May 2010, <http://times.am>

13 Գարգազրույց Օրհան Փամուկի հետ՝ “Der meistgehasste Türke”, 05 Februar 2005, <http://sc.tagesanzeiger.ch/dyn/news/kultur/560264.html>

որպես քաղաքացիների և պետության միջև նոր պայմանագրի միջոց: Նորագույն պատմության վերաբերմամբ հնարավորություններից մեկը հանրային/ազգային պատմության և տեղական ու անձնական հիշողությունների խզման մարտահրավերն է»¹⁴: Հետևաբար, այսօր կարող ենք արձանագրել պետության և հասարակության առաջադեմ հատվածի դիմակայության փաստը:

Հայոց ցեղասպանության առումով այս դիմակայությունը ենթադրում է ազատագրում պաշտոնական մեկնաբանության կաղապարներից, այլընտրանքային աղբյուրների մատչելիություն և հանրային լայն քննարկում:

Հրանտ Դինքի սպանությունը շրջադարձային էր թուրք հասարակության համար: Պաշտոնական թեզի ողջ սնանկությունը լավագույնս արտահայտված է լրագրող Ահմեդ Ալթանի հետևյալ տողերում. «Ոչինչ չի փոխվել. նրանք սպանվել են 1915-ին, նրանք սպանվում են և 2007-ին: Առաջ մեզ ասում էին «Նրանք սպանում էին մեզ, մենք էլ սպանեցինք նրանց»: Ի՞նչ էք ասելու հիմա. «Հրանտը սպանեց մեզ, մենք էլ սպանեցինք նրան»¹⁵:

Թուրքիայում սկսվել է հայերի «թաքնված» ինքնության բացահայտում, իրենց իրավունքների բարձրաձայնում, այն պարագայում, երբ նրանց իսկ խոստովանությամբ՝ իրենք «երբեք չեն զգացել իրենց հասարակության լիարժեք անդամ»¹⁶:

2010 թ. ապրիլ 24-յան հիշատակման արարողություններն արձանագրվեցին աննախադեպ միջոցառումներով. դա և՛ ներողության առցանցային ստորագրահավաքն էր, և՛ Թաքսիմ հրապարակի մոմավառությունը, և՛ Հայդարփաշա կայարանում անցկացված մատուցույցը¹⁷:

Իհարկե, որքան ուժեղանում է միջազգային, և հատկապես՝ ներքին ճնշումը, այնքան ավելի են ուժեղանում մաս պետության ջանքերը՝ հակաարշավներ կազմակերպելու ուղղությամբ:

Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարը Թուրքիայում դարձել է Ազգային անվտանգության խնդիր: Եթե մախկինում թուրքական պետության ժխտողականության վեկտորը հիմնականում ուղղված էր դեպի արտաքին աշխարհ, այն է՝ արշավներ կազմակերպել տարբեր երկրներում Հայկական բանակների ընդունման դեմ, բողոքի նամակներ ուղղել կառավարություններին (օրինակ՝ բրիտանական «Կապույտ գիրքը» հրատարակելու կապակցությամբ), վարձել ժխտողական պատմաբանների («Լուրիի գործը»), և կազմում էր թուրքական դիվանագիտական խթանը՝ քաղաքականության մի մասը, ապա ներկայումս նրա մեկ այլ սլաքը ուղղված է դեպի երկրի ներս՝ պաշտոնական թեզի հետ անհամաձայն անհատների դեմ պայքարելու համար:

Բազմաթիվ մտավորականներ այս կամ այն ձևով դատարանի առջև են կանգնել տիրաառչական Բր. օր. -ի 301-րդ հոդվածով: 2002 թ. դպրոցական դասագրքերում ընդգրկվել է «Ցեղասպանության անհիմն պնդումների» («Ermeni iddiaları») մասին դասընթաց, շրջաբերականներ են ուղարկվել ուսուցիչներին՝ «Հայկական ապստամբությունները և թուրքերի սպանությունները Առաջին աշխարհամարտի

14 **Լեյլա Նեյզի**, «Երանի նրանք զնացած չլինեին». հայկական հիշողությունների բեռը Թուրքիայում, «խոսելով միմյանց հետ՝ անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում», 2010 div-international, էջ 106:

15 **Ahmet Altan**, «1915-2007», Gazetem.net, in Rubina Perroomian, *And Those Who Continued Living in Turkey...*, p. 41.

16 «Թուրքիայի հայեր. համայնք, անհատ, քաղաքացի» գրքի հեղինակները այս երևույթը բնութագրում են հետևյալ կերպ՝ «Հավատարիմ միլլետից մինչև պահանջատեր քաղաքացի» (“Sadık milletten talepte olan yurttaş”): Տե՛ս **Günay Göksu Özdoğan, Füsün Üstel, Karın Karakaşlı, Ferhat Kentel, Türkiye’de Ermeniler: Cemaat-Birey-Yurttaş**, İstanbul, Bilgi Üniversitesi Yayınları, 2009, s. 457-480.

17 Տե՛ս “April 24 commemorated for the first time in Turkey”, *Today’s Zaman*, 26 April 2010.

տարիներին» թեմայով շարադրություններ գրելու առաջարկով, տարածվել է ստելություն հրահրող «Sarı Gelin» տեսաերիզը և այլն:

Ի պատասխան մի խումբ մտավորականների, լրագրողների և իրավապաշտպանների բողոքների՝ կրթության նախարարությունը խոստացել էր վերանայել իր մոտեցումը, սակայն գործուն քայլեր չեն ձեռնարկվել այդ ուղղությամբ:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը լուրջ մարտահրավեր է թուրքական պետությանը: Այդ գործընթացի մասնակիցներն են.

ա) երկու պետությունները՝ Հայաստան և Թուրքիա,

բ) երկու հասարակությունները՝ թուրքեր և հայեր (հայաստանյան հասարակություն, սփյուռքահայություն, Թուրքիայի հայեր),

գ) թուրքական պետությունը և արտասահմանյան երկրներում բնակվող թուրքերը:

Կարելի է ասել, որ այսօր թուրքական պետությունը իր ժխտողական քաղաքականությամբ պատանդ է դարձրել թուրք ժողովրդին թե՛ Թուրքիայում, թե՛ արտասահմանում (հատկապես այն երկրներում, որտեղ պետությունների օրենսդրական մարմինները ճանաչել են ցեղասպանությունը)՝ նրան ականա մասնակից դարձնելով ժխտողականության մեղքին:

Էլիֆ Շաֆաքի կարծիքով՝ այսօրվա թուրք հասարակության մեջ առկա է չորս մոտեցում ցեղասպանության ճանաչման խնդրին.

ա) ամենատարածվածը՝ տգիտություն և կոլեկտիվ մոռացություն,

բ) մտածված ժխտում և դիմադրություն (սրանք այնքան մեծ խումբ չեն կազմում, բայց նրանց ձայները առավել բարձր են, քանի որ ազդեցիկ դիրքերում են),

գ) երիտասարդների անտարբերություն (նրանց կարծիքով՝ «այս իրողությունները տեղի են ունեցել անցյալում, ինչու պիտի ես պատասխան տամ մի բանի համար, որ ես չեմ կատարել, այլ իմ պապերը, եթե, իհարկե, դա իրականում տեղ է»),

դ) ճանաչման համար պայքարողներ (մտավորականներ, իրավապաշտպաններ և ազատամիտ մարդիկ)¹⁸:

2. Թուրք հասարակության մեջ տարածված կարծիքներ

Ա) Ուրացման կողմնակիցներ

Այս դիրքորոշման կողմնակիցներն իրենց «թուրք հայրենասերներ» են անվանում և մեծաքանակ մի բանակ են՝ ազգայնականներ, իսլամականներ, ծայրահեղականներ: Վերջիններիս կարծիքով, բոլոր նրանք, ովքեր խոսում են «ցեղասպանության» մասին, «ազգի դավաճաններ են»: Այս խմբում առավել տարածված են հետևյալ տեսակետները.

1. Հայերի և Արևմուտքի (քրիստոնյաների) պահանջները ճանաչել ցեղասպանությունը՝ նրանց ավանդական վերաբերմունքն է թուրքերի հանդեպ, որոնց նրանք բարբարոս են ներկայացնում: Այս կարծիքի պարզ բանաձևն է՝ «թուրքի բարեկամը թուրքն է» (“Türkün dostu Türktür”) ասացվածքը:

2. Թուրքերը հանդուրժող են փոքրամասնությունների նկատմամբ: Նրանց պատմության մեջ և պետական մշակույթում տեղ չունի ռասիզմը, որը պատճառ է ցեղասպանության, դա բնորոշ է միայն Արևմուտքին: Ցեղասպանությունը նույնացվում է միայն նացիստների հետ: Բացակայում է պատկերացումը ցեղասպա-

¹⁸ Line Abrahmian, My Journey from Hate to Hope: Talking with Turks and Armenians about the Genocide, in “Reader’s Digest Magazines”, Canada Ltd, www.genocidewatch.org, pdf.

նությունների էության, տեսակների և տարբեր երկրներում դրա տարբեր դրսևորումների մասին:

3. Հայերն այս հարցը բարձրացնում են միայն Թուրքիայից փոխհատուցում և «հող» պահանջելու համար: Նման կարծիք էր արտահայտել իր ելույթներից մեկում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը, ասելով. «Հայերը մի ցավ ունեն՝ թուրքերից հատուցում պոկել» («Ermenilerin bir derdi var: Türklerden tazminat koparmak»):

4. Հայոց ցեղասպանության ճանաչումը վտանգ է, այն նման է Պանդորայի պահոցը բացելուն: Դա կպահանջի վերանայել ամեն ինչ՝ հանրապետության հիմնադրումը, քեմալիզմը, պետությունը, պետական գաղափարախոսությունը, Թուրքիայի ռեժիմը, ղեկավարներին, բանակը, ուսումնական ծրագրերը և այլն: Այս կարծիքի կողմերը երկրում ցնցումների առաջացման վախ ունեն¹⁹:

5. Պետք է առաջ գնալ, չկենտրոնանալով անցյալի վրա, որը ցավ է պատճառում, նվազագույն չափով համագործակցել Հայաստանի և Սփյուռքի հետ՝ Թուրքիայի շահերից ելնելով: Այս կարծիքը պրագմատիկ պետականամետներինն է:

6. Ճանաչման գործընթացն ընկալվում է որպես Արևմուտքի՝ Թուրքիայի նկատմամբ ավանդական թշնամանքի արտահայտություն, ճնշում կամ պատրվակ՝ Թուրքիան ԵՄ չընդունելու համար:

Բ) Ճանաչման կողմնակիցներ

Այս դիրքորոշումն ունեցողները Թուրքիայի ավտորիտար ռեժիմից դեպի իրական ժողովրդավարական համակարգն անցնելու կողմնակիցներ են: Պատահական չէ, որ այստեղ առաջամարտիկներ են 1960-1970 թթ. ռեժիմի հետ պայքարում «ատամներ ջարդած» գործիչները:

Բայց նրանց դիրքորոշումներում կան որոշակի տարբերություններ.

1. Պետության հետ առերեսվելու արևմտյան մոդելը, այնպես, ինչպես դա Գերմանիայում էր, բնորոշ չէ թուրքական մշակույթին²⁰:

2. Ճանաչել ցեղասպանության փաստը, առանց որակելու այն որպես ցեղասպանություն և առանց փոխհատուցման²¹:

3. Ցեղասպանության ճանաչումը պետք է գա Թուրքիայի ներսից, արտաքին ճնշումները՝ բանաձևերի կամ առավել ևս օրենքների տեսքով խանգարում են դրան²²:

4. Նորմալ է, եթե թուրքերը ներողություն խնդրեն և ճանաչեն ցեղասպանությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով²³:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության մասին անձնական կարծիքները որոշ չափով պայմանավորվում են անհատի՝ այս կամ այն էթնիկ և կրոնական խմբին պատկանելությամբ: «Սաբանջը» համալսարանի դասախոս Լեյլա Նեյզին «Սաբահ» օրաթերթին տված հարցազրույցում

19 Տե՛ս Erol Özkoray, “Ermeni soykırımı niçin hâlâ tabu?”, *KÜYEREL*, 10.03.2010.

20 Չինաստանի օրինակը, որը ճապոնիայից պահանջում է ընդունել պատերազմական հանցանքները, ցույց է տալիս, որ դա դուրս է որևէ մշակութային կոնտեքստից, դա համամարդկային պահանջ է:

21 Այսպիսի դիրքորոշում ունեցողներին կարելի է անվանել «Ց» բառից («G-word») վախեցողներ, այսինքն՝ ցեղասպանությանը իրավական որակում տալուց խուսափողներ:

22 Այս տեսակետի կողմնակիցն էր Յրանտ Դինքը:

23 Ճանաչման, դատապարտման և փոխհատուցման կողմնակից է, օրինակ Թուրքիայի մարդու իրավունքների ասոցիացիայի փոխնախագահ Էրեն Քեսքինը: Տե՛ս Eren Keskin: “We Are All Guilty!”, <http://www.armenianweekly.com/author/eren-keskin/html>

նշում է. «Քրդերի մեջ էլ ուշագրավ, մի տեսակ՝ համակրանքի, կարեկցանքի զգացմունք է առաջացել: Այդ կարեկցանքի պատճառը իրենց կրած 10-ամյա տառապանքներն են: Քրդերն իրականում իրենց մեղավոր են զգում հայերի հանդեպ և հիմա, երբ տուժողներն իրենք են, ավելի լավ են հասկանում հայերի տառապանքները: Իսկ քուրդ ավելիները, որ այն ժամանակ հայերին օգնություն ցուցաբերած միակ էթնիկ խումբն էր, այդ բոլորը պատմել են իրենց թոռներին»²⁴:

Թաներ Աքչամի կարծիքով՝ ժխտված, խեղված պատմության հիշողությունը չի վերանում, այն տեղափոխվում է ենթագիտակցության դաշտ և մնալով շղատապարտված՝ կարող է դառնալ քաղաքական մշակույթ: Կարևոր է, որ հասարակությունը տեղյակ լինի այն հանցագործությունների մասին, որոնք խումբը կատարել է ինքը, կամ նրա հայրենակիցները, կամ նախնիները, որ նա չփորձի «սպիտակեցնել» պատմությունը, չկրկնելու համար նույն հանցանքը: Իմացությունը թույլ է տալիս ազնվորեն ճշգրտել այն սոցիալական կամ հասարակական խմբերը, այն պայմանները, որոնք հնարավոր են դարձնում նման հանցանքի կանխումը: Իմացությունը հասուն հասարակության արտոնությունն է²⁵:

Այսպիսով, այսօր թուրք ազգայնականությանն ընդդիմանում են ժողովրդավարամետ ազատական ուժերը: Սակայն որքա՞ն մեծ է վերջիններիս ազդեցությունը առկա թուրք-հայկական գործընթացների վրա, որչա՞փ է պետական ժխտողական քաղաքականությունն արտացոլում Թուրքիայի հանրության հավաքական կարծիքը. սրանք հարցեր են, որոնց պատասխանները պետք է տա ինքը՝ թուրք հանրությունը: «Պատրա՞ստ է արդյոք Թուրքիայի հասարակությունը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին» հարցին պատասխանենք Մեծ եղեռնը վերապրածների զավակ Ավետիս Քեշիշյանի ընդհանրացումով. «Թուրքիան ինքն իր քաղաքացիների հանդեպ չի կարողանում բարեխիղճ ու լոյսալ լինել... Դրա համար անհրաժեշտ բարոյական մակարդակ չկա... Քանի դեռ այդ վերևում կանգնած և բոլոր լծակներն իրենց ձեռքերում պահողները չեն մարդկայնացել, հարցը չի լուծվի: Ժողովուրդները, ես հավատում եմ, գիտե՞ք, շատ հեշտ կարող են բարեկամանալ: Բոլոր ժողովուրդներն իրենց մեջ ունեն այդ սթափ բնագրային պոտենցիալը, բայց վերնախավերը օգտվում են ժողովրդի գիտակցականության ցածր մակարդակից և անկարողությունից և անում են այն, ինչ որ ուզում են: Օրինակ՝ յոթնասուներորդի թուրք ժողովրդին լցրեցին մեր դեմ, և որոշ սրսկում ստացավ թուրք ժողովուրդը, մի քիչ ավելի շատացան մեր նկատմամբ ատելությամբ լցվածները... Դա հատուկ, այդ վերնախավի հատուկ քաղաքականությունն էր: Եթե նրանք դա չանեին, էլի թող զենցոցիդը չընդունեին, բայց բարեկամությունը շատ ավելի հեշտ տեղի կունենար: Նայեք, մարդը սխալական է: Սա աքսիոմա է: Ուրեմն կյանքում ներողամտության անհրաժեշտություն է ստեղծվում: Սա շատ կարևոր է, շատ դժվար է, բայց շատ էական է ու շատ անհրաժեշտ, եթե ուզում ենք մարդավարի ապրել: Սակայն ներողամտությունը սկսվում է սխալվողի պահվածքից: Մխավվողը պիտի պատրաստ լինի սխալը չկրկնելու, սխալը չկրկնելու համար պիտի հասկանա, պիտի ընդունի, որ սխալ է արել: Այդ դեպքում ներողամտությունն իմաստ կունենա: Առանց ապաշխարանքի ներելն անիմաստ է: Ու՞ն ներես, ի՞նչը ներես: Ունե՞ն արդյոք նրանք մեր ներողամտության կարիքը: Թե՛ ապաշխարանքը, թե՛ ներողամտությունը բարձր քաղաքակրթության վկա-

24 Müjgân Halis, “Türkiye ve Ermenistan’ın ortak hafızasına yolculuk”, Sabah, 21.02.2010.
25 Տե՛ս **Belinda Cooper, Taner Akcam**, “Turks, Armenians and the «G-Word»”, http://www.turqueeurop-eeenne.eu/spip.php?page=print&_article=989

յություն են: Ունե՞ն արդյոք թուրքերն այդ քաղաքակրթական մակարդակը: Ունե՞նք մենք այդ մակարդակը: Չգիտեմ»²⁶:

Ամփոփում

1. Թե՛ Հայոց ցեղասպանության տարիներին, թե՛ հետագայում կատարված ոճրագործության վերաբերյալ լռության և ուրացման քաղաքականություն վարելու հարցում իշխանություն-ժողովուրդ համերաշխության առկայությունը թույլ է տալիս պնդել, որ թուրքական հասարակությունը փորձ անգամ չի ձեռնարկել՝ հաղթահարելու համար այսպես կոչված՝ «հայկական հարցի տաբուն»: Թաներ Աքչամի պատկերավոր խոսքերով՝ ողջ Թուրքիան գերադասում է «ապրել ցեղասպանության թալանի և գողոնի վրա»՝ դրանով իսկ պետության հետ կիսելով Հայոց Եղեռնի ժխտողականության պատասխանատվությունը:

2. Հատկանշական է, որ Թուրքիայում հասարակական կարծիքի ձևավորումն ու զանգվածային մասնակցությունն ապահովելու համար քաղաքական միջոցառումների զգալի մասը հիմնված է ընդդեմ 1915-ի ցեղասպանության և հայկական թշնամանքի գաղափարի վրա: Դրա վառ ապացույցը եղան անցած 2011 թ. հունիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում: Նախընտրական շրջանում ակտիվորեն թմբկահարվում էին հայազգի թեկնածուներին կուսակցությունների նախընտրական ցուցակներում ընդգրկելու մասին լուրերը: Սակայն ակնհայտ էր, որ Թուրքիայում խորհրդարանական ընտրություններում հայ պատգամավորների առաջադրումը հերթական PR-ակցիան էր, և «ցուցադրական ելույթների» ավարտից հետո նրանց անհրաժեշտությունը վերանում էր: Դա էր, թերևս, պատճառը, որ անցած ընտրարշավում մինչև տարբեր քաղաքական ուժերի կողմից իրենց թեկնածուների ցուցակները հաստատելն անգամ՝ հայ թեկնածուների անունները տառաջհորեն անհետացան:

3. Քաղաքական ուժերը բավական իրատեսորեն ընկալեցին, որ այսօր Թուրքիայում առկա հակահայկական տրամադրությունների պայմաններում, երբ սոցիոլոգիական հարցումների համաձայն՝ բնակչության շուրջ 70 տոկոսը խիստ բացասաբար է վերաբերվում հայերին, կուսակցության շարքերում հայազգի թեկնածու ներկայացնելը քաղաքականապես այդքան էլ ձեռնտու չէ և կարող է լուրջ քննադատությունների, հետևաբար՝ քվեների կորստի տեղիք տալ:

4. Իհարկե, չի կարելի չնկատել, որ վերջին ժամանակներում Թուրքիայում արձանագրվում է «հայկական տաբուն» մեղմացման փաստը: Սակայն, ի հեճուկս այն պնդումների, թե թուրք հասարակությունը փոխել է իր վերաբերմունքը Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ, հարկ է նշել, որ նույնիսկ այն ոչ մեծաթիվ թուրք մտավորականները, որոնք շեշտում են Թուրքիայի կողմից ցեղասպանության փաստի ընդունման անհրաժեշտությունը, չեն բացառությամբ, երբեք չեն խոսում այդ ոճրագործության հետևանքները վերացնելու մասին, այն է՝ ճանաչումից բացի չեն անդրադառնում նաև փոխհատուցման խնդրին : Բացի դրանից, 70 միլիոնանոց Թուրքիայում այդ մտավորականների ձայնը առայժմ լսելի չէ հասարակության լայն զանգվածների համար :

Հետևաբար, պատասխանելով այն հարցին, թե պատրա՞ստ է արդյոք արդի Թուրքիան ընդունելու Հայոց ցեղասպանության փաստը, կարող ենք պնդել, որ

26 Չրանուշ Խառատյան-Առաքելյան, Ու՞ն ներես, ի՞նչը ներես, «խոսելով միմյանց հետ՝ անձնական հիշողություններ անցյալի մասին Չայաստանում և Թուրքիայում», 2010 dvv-international, էջ 68:

դրա համար անհրաժեշտ է ոչ միայն թուրքական պետության ժողովրդավարացումը, անհրաժեշտ է, որ « ժողովրդավարացվի » թուրք հասարակությունն ինքը:

Summary

THE ATTITUDE OF TURKISH SOCIETY

Towards the Problem of Recognition of the Armenian Genocide by
Turkey

Anush R.Hovhannisyan

In the last ten years, steps aimed at reconciliation between Turkey and Armenia has considerably increased. But it is obvious that real reconciliation between the two nations and between the two societies is impossible without the recognition of the Armenian Genocide.

“Denialism” is the term commonly used to characterize the positions of both the Turkish state and society towards the Armenian Genocide. Although the arguments of Turkish state denialism were widely discussed scholarly, the motivations for public denial are still less investigated. Why has Turkish society chosen simply to forget, to ignore or deny the crimes committed by their ancestors or as Taner Akcam said “wish to forget history?”

Some scholars explain it by the lack of historical consciousness in Turkey. According to them, the public sphere has been totally dominated by the imposed official state narrative and to be critical of the official text, publicly oppose and contradict it means to question the very existence of the state and Turkish identity. Society was unable to question this narrative, so ignorance, amnesia and fear became part of their survival strategy. In our article, we argue that in such collectively committed crimes as genocide and its denial there must be a kind of “solidarity” between the state and society: society must be hostile towards the target group to allow the genocide and it’s denial to occur. Whatever the motivations for this are, society cannot move forward without confronting and acknowledging the crimes of the past.

In the last years “the desire to not remember the past” or the “Armenian Genocide taboo” is losing ground; part of Turkish society wants to know what really happened in 1915 and is demanding open discussion of the Armenian Genocide. This group of historians, journalists, intellectuals and common people still comprise only a small part of Turkish society and cannot considerably influence state policy. But the process of the further democratization of Turkey could change the attitude of society towards this issue that is that the genocide will stop being viewed as rational and acceptable policy.